



Տ. ՆԻԿՈԼԱՅԵ ՌԸԴՈՒԼԵՍԿՈՒ ՔԱՀԱՆԱ

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ*

„TEMEIURI PENTRU LIBERTATE IN NOUL TESTAMENT“

de Pr. Drd. NICOLAE RADULESCU

In revista—„ORTODOXIA“, Nr. 3, Iulie—septembrie 1975

BUCURESTI

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆԱԽԱՆՆԱՄՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Աստված օժտեց մարդուն ազատությամբ և ազատ կամքով, որպեսզի որսնով շնորհի մարդուն հնարավորությունը՝ Աստուծո հետ համագործակցելու, աշխարհը դեկավարելու և կատարելագործելու գործում (Մատթ. Ը 3—9): Տրված ուժը ենթադրում է, սակայն, պատասխանատվություն, իսկ իրավունքները՝ պարտականություններ: Ավելին, ինչքան մեկին տրված ուժը առավել մեծ է, այնքան մեծ պետք է լինի նրա պատասխանատվությունը: Դրա համար ս. Գիրքը չի հաստատում միայն մարդու ազատ կամքով օժտված լինելը և մյուս արարածների վրա տիրելու իրավունքը, այլ նաև մարդու սրբապատվությունը՝ իր ազատ կամքն ու իր կարողություններն օգտագործելու ոչ որևէ ձևով, այլ միմիայն համաձայն Աստուծո կամքի և բարոյական օրենքի: Ուրեմի մարդու դիրքը աշխարհի նկատմամբ բացարձակ մի տիրոջ դիրք չէ. նա մի տևոն է, մի ծառա, որին նրա տերը, որոշ ժամանակի համար հեռացած լինելով, հանձնարարել է նրան տնտեսել իր հարստությունը, ուտելիք և ըմպելիք մատակարարել իր

մյուս ծառաներին (Մատթ. ԻԵ 14, Դուկ. ԺԲ 36):

Ըստ աստվածաշնչական մարդակերպության, մարդը կենսաբանական միակ տեսակն է, որը օժտված է հոգով, իր մարմնական բնագոյների վրա իշխելու ուժով և ինքնուրույն հոգեկան կյանքով: Մարդը չի հղացվել և չի կառուցվել որպես մի մեքենա, որը մեխանիկորեն կստարի առացած հրամաններ ու գործի նախասահմանված, բռնադատող օրենքների համաձայն: Ոժտելով մարդուն մտածելու կարողությամբ, վճռելու և գործելու անձնական ազատությամբ և մյուս սրբապատվությունների վրա տիրելու ուժով, Աստված դարձրեց նրան իր գործակիցը, որպեսզի լինի իր ներկայացուցիչը մյուս արարածների մոտ և անձնական ցանկությամբ կատարի իր կամքը՝ աշխարհը դեկավարելու և կատարելագործելու գործում:

Մարդուն հանձնարարված աստվածային պարտականությունը (Ծննդ. Ա 28) և մարդու՝ բանավոր էակի ստանձնած պատասխանատվությունը (Ծննդ. Բ 19), ենթադրել են տալիս ոչ միայն նրա հնազանդությունը և հավասարությունը Աստուծո՝ ամեն ինչի տերն ու Տիրոջ կամքի հանդեպ, այլ նաև կամքի և գործելու նրա ազատությունը կյանքի և գործունեության սահմաններից ներս: Առանց ազատության խոսք չի կարող լինել պատասխանատվության մասին:

* Ծարուհանված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № 36—Ժ-ից:

Իսկ մարդու ազատությունը չի հավանում Աստուծո առեւտրությանը և չի ամենա-
հավանում այն, որովհետեւ հենց Աստված
շնորհեց մարդուն այն ազատությունը՝ ըստ
Իր պատկերի և ըստ Իր նմանության նրան
ստեղծելիս, և նույն ինքն Աստված որոշեց
այն ասպարեզը, որ ազատությունը հաշ-
տկելու է օրինակով¹⁴:

Մարդու ազատության և Աստուծո գեր-
իշխող կամքի հարաբերության ըմբռնումը
հանդիպեց փրկիստիպական բնույթ կրող
որոշ շփոթությունների և առարկություննե-
րի: Պեղագիտների աղանդը, չկարողանա-
լով բանականորեն հաշտեցնել Աստուծո գեր-
իշխանության գաղափարը մարդու կամքի
ազատության հետ և աստվածային շնորհի
մարդկային արարքների ազատության հետ,
միտում էր շնորհի անհրաժեշտությունը
մարդու փրկության համար և պաշտպանում
էր այն տեսակետը, որի համաձայն փրկու-
թյան կատարումը կապված է մարդու նա-
խաձեռնության, կամքի և ջանքերի հետ:
Այս հերետիկոսության դեմ պայքարելով,
երանելի Օգոստինոսը հանգեց հակառակ
տեսակետի, ըստ որի՝ մարդու փրկությունը
կախված է միայն Աստուծո կանխագիտու-
թյունից, Նրա հավիտենական որոշումից և
շնորհից: Միջին դարերի վերջին շրջանին
արևմտյան որոշ սխոլաստիկներ քարոզում
էին աստվածային բացարձակ որոշումը,
ըստ որի՝ Աստված դեկալարում է անդիմա-
դրելիորեն Իր արարածների ողջ գործու-
նեությունը, և մարդը Նրա առաջ ազատ չէ
իրականության մեջ: Բողոքական ռեֆորմը,
մանավանդ կալվինիստական ճյուղը, որ-
դեզրեց յուրահատուկ կերպով Օգոստինոս-
յան նախասահմանումը՝ վերագրելով հա-
մարյա ամեն ինչ աստվածային շնորհին՝ ի
վնաս մարդկային ջանքերի և բարի արարք-
ների ունեցած դերի¹⁵: Հռոմի կաթոլիկ եկե-
ղեցու մի աստվածաբան, յուրացնելով բա-
նապաշտ տեսակետը, որ անհնար է գտնում
հաշտեցնել Աստուծո կանխագիտությունը
մարդու կամքի ազատության և պատասխա-
նատվության հետ, հանգում է այն եզրա-
կացության, որ մարդու ազատ արարքները
բացարձակապես սահմանափակվել են. ու-
րեմն նրանք մեզ չեն կազմում Աստուծո
կանխագիտության դրոշմը¹⁶:

Աստուծո նախահամարյան, այսինքն՝
Աստուծո կանխագիտության և աշխարհի
նկատմամբ ունեցած Իր գերիշխանության
միջև եղած հարաբերությունները հասկա-
նալու համար, հանդիպում ենք որոշ դժվա-
րությունների, որոնցից մեծ մասի պատ-
ճառն է, այսպես կոչված, «նախասահմա-
նում»-ի¹⁷ բացարձակացումը, որը հաստատու-
յուն համար ձգտագործվել են Աստվածա-
շնչի որոշ հատվածներ, օրինակ՝ Մատթ.
Ի 23, Եփես. Բ 4: Նախասահմանումի հան-
դեպ հավատքի հիմք հանդիսացող վերո-
նիշյալ հատվածները ճշգրիտ հասկանալու
համար պետք է նկատի առնվեն և հարգ-
վեն աստվածաշնչական աստվածաբանու-
թյան որոշ հիմնական սկզբունքներ.

ա) Աստված ոչ միայն ամենագետ է և
ամենակալ, այլ նաև սուրբ, ուրեմն չի կա-
րելի պնդել, որ Նա կվարձատրի կամ
կպատմի որևէ մեկին անարդարորեն՝ նրա
գործերը ճանաչելուց առաջ (Հակ. Ա 13,
Հռոմ. Բ 5—12):

բ) Մարդու կամքի ազատությունը և
աստվածային շնորհը (որ սկսում է և ի կա-
տար ամում փրկությունը) Աստուծո կողմից
մարդկանց տրված ձրի նվերներ են, իսկ
Աստված եւ չի վերցնում Իր նվերները, այլ
մարդը ինքը կարող է մերժել դրանք, վատ
ձևով օգտագործել և կամ կորցնել դրանք
(Գաղ. Ե 13, Մատթ. ԻԵ 28):

գ) Աստված չորոշեց նախապես և կամա-
յականորեն, որ որոշ մարդիկ երջանիկ լի-
նեն, իսկ մյուսները՝ դժբախտ, այլ որոշեց,
որ բարի մարդիկ պիտի վարձատրվեն, իսկ
չարերը պիտի պատժվեն, և այս որոշումը
պայմանավորված է Նրա կանխագիտու-
թյամբ, այսինքն մարդկանց կողմից ազատ
կերպով գործված արարքների ճանաչողու-
թյամբ (Մատթ. ԻԵ 31):

դ) Աստված չի վարվում մարդկանց՝
այսինքն Իր ամենարևոտի արարածների
հետ ինչպես կամազուրկ ստրուկների կամ
ինչպես գործիքների հետ, որոնք չունեն
ինքնուրույնություն ու նախաձեռնություն,
այլ ինչպես էակների հետ, որոնք ունեն
սեփական մտածում, ազատ կամք, անձնա-
կան պատասխանատվություն ու գործու-
նեություն (ՄՃՆՊ. Բ 8, Հռոմ. Բ 18):

ե) Աստված, լինելով ողջ մարդկության
հայրը, ցանկանում է բոլոր մարդկանց փրկ-

¹⁴ R. Blanc, art. «Qu'est-ce que l'homme?»
in rev. Positions luthériennes, Paris, 1971, p. 115.

¹⁵ Cf. Hr. Andrusos, «Simbolica», trad. de
prof. Iustin Molescu, Ed. Centrului mitropolitan
al Olteniei, 1955, p. 189.

¹⁶ Fernard von Steenbergend, art. «Connaissances
divine et liberté humaine», in «Revue Theo-
logique de Louvain», Louvain, 1971, p. 46—48.

¹⁷ Նոր Կտակարանում «նախասահմանում» գոյա-
կանը չի հանդիպում: Հանդիպում ենք սակայն
«կանխորոշել» (Προορίζω) բային (Գործ. Գ 28,
Հռոմ. Ը 29, Ա Կորնթ. Բ 7, Եփես. Բ 5), ինչպես
նաև «կանխագիտություն» (προγνωσις) (Գործ. Բ 23,
Ա Պետր. Ա 2) և «ընտրություն» (ἐκλογή) (Գործ.
Թ 15, Հռոմ. Թ 11) բառերին:

կությունը, կատարելությունն ու հավիտենական երջանկությունը, այլ ոչ միայն նրանցից ոմանց (Ա ՏԻՄ. Բ 4, Հոմ. ԺԱ 32):

զ) Հանուն Իր հայրական բարության, Աստված հայտնում է մարդկանց ոչ այնքան Իր ամենագործությունն ու արդարությունը, այլ մանավանդ համբերությունն ու սերը՝ հավիտենականությունից որոշելով կանչել բոլորին դեպի փրկություն, իսկ «իբրև եկն լրումն ժամանակին՝ առաքեաց Աստուած զՈրդին իւր» (Գաղ. Դ 4) աշխարհ և բաշխեց բոլորին առատապես ու Հոգու շնորհները (Հովհ. Գ 16, Հոմ. Ե 8, Ա Հովհ. Դ 9 և այլն):

Սուրբ գրական բնագրերը Աստուծո կանխատեսության և հավիտենականության մասին, որոնք վերաբերում են մարդկային ցեղի փրկությանը ու Հոգով, Իր Որդու միջոցով, կազմում են այն պարբերությունները, որոնց կենտրոնական միտքը երկնային Հոր սերն է բոլոր մարդկանց նկատմամբ և դրանք ցույց են տալիս մեզ մեկնակետը և ճանապարհը հասկանալու համար հարաբերությունը Աստուծո նախախնամության և մարդու ազատության միջև երկնային շնորհի և հավատացյալների կամավոր գործակցությամբ: Եվ քանի որ տեսականորեն կարելի է խոսել՝ մարդկանց ապագայի համար աստվածային մի նախասահմանումի մասին, դա պետք է հասկանալ լայն իմաստով՝ սուրբ Պողոս առաքյալի վկայության իմաստով. «Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի նոյն՝ ըստ հաճութեան կամաց իւրոց» (Եփես. Ա 5)¹⁸:

Իրապես, ո՛չ Աստուծո նախախնամությունը, ո՛չ ի սկզբանե իր որոշումը՝ փրկելու նրանց, ովքեր Նրան պիտի սիրեն, և ո՛չ էլ Նրա շնորհները չեն խանգարում մարդու ազատությունը, այլ ընդհակառակը, օգնում են Նրան, որպեսզի առավել աշխուժությամբ, դյուրությամբ և ստուգությամբ ընթանա դեպի բարին: Աստվածային նախախնամությունը հարգում է մարդու ազատությունը, իսկ աստվածային շնորհը ոչ մեկին չի բռնադատում: Զխանգարելով մարդու ազատությանը, աստվածային շնորհը ուժեղացնում է մեղքի պատճառով տկարացած մարդկային ազատ կամքը և օգնում նրան, որպեսզի նա կարողանա բարձրանալ ու հասնել Աստուծո որդիների փառավոր ազատ վիճակին (Հոմ. Ը 21): Այս վիճակը՝ «փառաց ազատութիւնը», նշանակում է մարդու ամբողջական ազատագրումը

մեղքի ծառայությունից և մահվան դատապարտությունից, ինչպես նաև նրա մասնակից դառնալը աստվածային բնության փառքին (Բ Պետր. Ա 2—4): «Ձի Տէր հոգի է. ուր հոգի Տեսուն է, անդ ազատութիւն է,—վկայում է Պողոս առաքյալը,—բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք զփառսն Տեսուն իբրև ընդ հայելի տեսեալ՝ ի նոյն պատկեր նորոգիմք փառաց ի փառս, որպէս ի Տեսուն Հոգւոյ» (Բ Կորնթ. Գ 17)¹⁹:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ՊԱՏՎԻՐԱՆԻ ԵՎ ՍԻՐՈ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոր Կտակարանի ըմբռնումով իրապես ազատ կլինեն թե՛ ինքնագիտակցության խորքում և թե՛ գործնական կյանքում ո՛չ նրանք, ովքեր մերժում են ամեն տեսակի բարոյական օրենք, այլ նրանք, ովքեր ապրում են կամավոր կերպով որպես Երկնավոր Հոր սիրելի և հնազանդվող որդիներ՝ հակառակվելով չարին և գործելով միայն բարին: «Օրենք հոգւոյն կենաց ի Քրիստոս» (Հոմ. Ը 2), կամ «ազատութեան օրենքը» (Հակոբ. Բ 12) գտնվում է մեղքի օրենքի հակառակ քնեռում, մեղքի օրենք, որը տիրում է նրանց վրա, ովքեր հեռուվում են մարմնի ցանկություններից՝ կատարելով նրա գործերը (Հոմ. Զ 12): Միայն «Ուր Հոգի Տեսուն է, անդ ազատութիւն է», իրավացիորեն ճշտում է ու Պողոս առաքյալը (Բ Կորնթ. Գ 17):

Ուրեմն ազատությունը, որին կանչված ենք Ավետարանով, չի նշանակում ո՛չ բարոյական հակասություն և ո՛չ անիշխանություն, «Ձի ոչ եթէ խոռվութեան է Աստուած, այլ՝ խաղաղութեան» (Ա Կորնթ. ԺԴ 33): Եվ որովհետև մեղքի ծառայությունից և մահվան իշխանությունից փրկվելու գինը Քրիստոսի՝ Աստուծո մարդացած Որդու թափած արյունն էր, փրկագնվածները պարտավոր են ապրել Աստուծո կամքի համաձայն (Հոմ. Զ 11) և մեծարել Նրան իրենց մարմնում և հոգում, որոնք Աստծուն են պատկանում (Ա Կորնթ. Զ 15—20): Այս պատճառով ու Պողոս առաքյալը, քննադատելով գաղատացի որոշ քրիստոնյաների բարոյական հակասությունները և ազատության չարաչար գործածումը, գրում էր. «Ձի դուք յազատութիւն կոչեցեալ էք, եղբարք. միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ» (Գաղ. Ե. 13):

¹⁸ Fr. J. Leenhardt, «Épître de Saint Paul aux Romains», Neuchâtel. Paris, 1957, p. 126;

C. Spick, op. cit., vol. 2, p. 637;

«Invatatura de credinta crestina ortodoxa», Bucuresti, 1952, p. 126—129.

¹⁹ Fr. Amiot, «Les idées maîtresses de Saint Paul», Paris, 1962, p. 48.

Իսկ ս. Պետրոս առաքյալը խրատում է նույնպես. «Իբրև զազատս լինել, և մի իբրև պատրուակ շարութեան ունել զազատութենն, այլ իբրև Աստուծոյ ծառայք» (Ա Պետր. Բ 16):

Բարոյական օրենքին հասնելու համար առաջին պայմանն է ուրեմն Աստուծո կամքը ճանաչելը, իսկ երկրորդը՝ մեղքի հետ ունեցած կապերի խզումը: Իրեն հավատացող հրեաներին Քրիստոս ասում է. «Եթե դուք կացջիք ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք... և ճշմարտությունն ազատեցե՞ զձեզ. Ամենայն որ առնե՞ զմեղս՝ ծառայ է մեղաց. Իսկ արդ եթե Որդին զձեզ ազատեցուցե՞, ճշմարիտ ազատք լինի՞՞ք» (Հովհ. Ը 31—36): Որովհետև Աստուծո Որդու մարդկությունը և քրիստոնեական եկեղեցու հիմնադրումը ունեն որպես նպատակ՝ կրոնական ճշմարտության բացահայտումը մարդկանց առաջ և նրանց ազատագրումը մեղքի ծառայությունից (Մատթ. Ի 28, Գաղ. Ե—1), դրա համար, մկրտությանը վերաճնունդի առաջին արդյունքն է հավատացյալների ազատագրումը մեղքի ծառայությունից և նրանց օծումը արժանապատվությամբ, որպես Աստուծո ծառաներ՝ ընթացող դեպի «կեանքն յաիտենից ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր» (Հռոմ. 2 18—22):

Բայց Հիսուս Քրիստոս կամենում է իր աշակերտներին դարձնել «քարեկամք» և ոչ «ծառայք» (Հովհ. ԺԵ 14) և դրա համար պահանջում է նրանցից, որ սիրո մղումով ենթարկվեն Իր պատվիրաններին (Հովհ. ԺԴ 15): «Մէր յԱստուծոյ է. ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ձեռալ և ճանաչէ զԱստուած,—գրում էր ս. Հովհաննէս առաքյալը,—իսկ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է» (Ա Հովհ. Դ 7—8): Այստեղ սովորական սիրո մասին չէ խոսքը, որպես սոսկ մարդկային տկար ուժերի արտահայտություն, այլ այն սիրոյ մասին, որը ս. Հոգին վառում է և պահում նրանց հոգիներում, ովքեր ի վերուստ են ծնված (Ա Հովհ. Գ 7—8). «Յայսմ է սէրն, ոչ զի մեր սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զՈրդին իր ի քառութիւն մեղաց մերոց» (Ա Հովհ. Դ 10), և «Մէրն Աստուծոյ սիրեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, որ տուա մեզ» (Հռոմ. Ե 5):

Անտեղ, որտեղ գոյություն ունի փոխադարձ սէր, կա նաև մտքերի հաղորդություն, կամքի նույնություն, գործունեության միություն: Աստծուն անկեղծորեն սիրողը իր հոգու և կամքի մղումով կատարում է այն, ինչ որ Աստծուն հաճելի է, քստ Քրիստոսի օրինակի, որն ասաց. «Հայրն իմ... որ առա-

քեացն զիս, ոչ եթող զիս միայն, զի ես զհաճոյս Նորա առնեմ հաճապալ» (Հովհ. Ը 29): Այն հավատացյալը, որ սիրում է Աստծուն իր սրտի խորքից և «Հոգւոյն Աստուծոյ վարի» (Հռոմ. Ը 14)՝ աստվածային շնորհի միջոցով որդեգրումը ընդունելուց հետո, կատարում է Նոր Ուխտի աստվածային պատվերները՝ ոչ բռնադատելով, ոչ պատժից վախենալով կամ վարձատրություն ակնկալելով, այլ ինքնակամ, ինքնահոգաբարությամբ, անձնուրաց հնազանդությամբ և ուրախությամբ, որովհետև նա ինքն է կամենում այն, ինչ որ Աստված սպասում է նրանից²⁰:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԲՐԵՎ
ՊԱՅՄԱՆ ՄԱՐԿԱՅԻՆ
ԱՆԶՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԿԱՆՑ
ՄԻՋԵՎ ԲԱՐՎՈՔ
ՀԱՐԱՅԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ

Առաքելական հորդորը՝ «Իբրև զազատս լինել... իբրև Աստուծոյ ծառայք» (Ա Պետր. Բ 16) պարադոքս կարող է թվալ, բայց քրիստոնյաների համար նրանով արտահայտվում է մի մեծ ճշմարտություն. իրապես ազատ են միայն նրանք, ովքեր հարգում են Աստուծո՝ բոլոր մարդկանց երկնավոր Հոր և նրանց երջանկությունը ցանկացողի կամքը: Մկրտությամբ վերաճնունդը և կյանքն ի Քրիստոս նշանակում է վախճանը մեղքից կախված լինելու. մեղքի և մահվան ծառաները ազատվում են այս ծառայությունից և ներկայանում Աստուծո առաջ իբրև կենդանի էակներ՝ մտեղներից հարություն առնողներ (Հռոմ. 2 13), որոնք մեղքից ազատվելու և Աստուծո հանդեպ հնազանդության շնորհիվ շահում են հավիտենական կյանքը (Հռոմ. 2 22): Մեղքից ազատագրումը և Աստուծո ծառաներ լինելու կրոնական վիճակի ձեռքբերումը կրկնակի նշանակություն ունի մարդկանց համար, այն է՝ ազատ են նվիրվելու առաքինի և սուրբ կյանքի (Հռոմ. Ե 19) և սրտանց կատարելու Քրիստոսին հնազանդվելու իրենց խոստումը (Հռոմ. 2 17)²¹:

Բացի մեղքից հեռու մնալուց, ազատությունն ի Քրիստոս ենթադրում է միայն մեկ սահմանափակում, որը հարգանքն է մյուս մարդկանց նկատմամբ: Բայց այս սահմանափակումը նույնպես դրսից պարտադրված չէ քրիստոնյային, այլ իր արմատն ունի մերձավորի հանդեպ ունեցած սիրո մեջ. «Ամենայն ինչ ինձ մարթ է,—գրում էր սուրբ Պողոս առաքյալը,—այլ ոչ ամենայն

²⁰ C. Spick, op. cit., vol. 2, p. 650.

²¹ Ibidem, p. 660.

ինչ օգուտ է... Մի ոք զանձին եւեթ խնդրիցէ, այլ և զընկերին» (Ա. Կորնթ. Ժ 23—24), «Բայց զգոյշ լերուք, գոյցէ իշխանութիւնդ ձեր այդ գայթակղութիւն լինիցի տկարացն» (Ա. Կորնթ. Ը 9), ուրեմն «Իւրաքանչիւր ոք ի ձեռն (մեռն) ընկերին հաճոյ լիցի ի բարիս վասն շինութեան» (Հռոմ. ԺԵ 2): Սա ոչ թէ անհատական ազատության միակեցումն է, այլ նրա օգտագործման բարձրագույն մի ձև հասարակական կյանքում²² հանուն մերձավորի հանդէպ ունեցած սիրո, մարդկանց և հասարակության երջանկության համար: «Սիրով ծառայեցէք միմեանց» (Գաղ. Ե 14), «Զմիմեանց բեռն բարձէք և այսպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի» (Գաղ. Զ 2): Այսպիսով ապացուցվում է, որ Ավետարանը սիրո և ծառայության մի դպրոց է և աստվածային մի կիզակետ հանուր մարդկության բարօրության:

Հոգևոր տեսակետից քրիստոնյան ազատ է այն իմաստով, որ այլևս բաժանված չէ Երկնավոր Հորից մեղքի կապանքներով, որովհետև աստվածային շնորհի «Փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ» (Կող. Ա 13): Սերը Երկնավոր Հոր նկատմամբ ենթադրում է սեր մերձավորի հանդէպ, որովհետև այս է Նրա պատվիրանը. «Որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր» (Ա. Հովհ. Դ 21):

Արարչի ասած խոսքերը՝ «Ոչ է բարոք մարդոյ միայն լինել» (Ծմնդ. Բ 18), և մանավանդ Փրկչի պատգամը՝ փրկության արժանանալու համար բարի գործերի անհրաժեշտության մասին (Մատթ. ԺԵ 31, Լուկ. Ժ 37, Ա. Հովհ. Գ 16 և այլն), բացահայտում են այն իրողությունը, որ անհատը կարող է կատարելագործվել միայն եղբայրական հաղորդակցության մեջ լինելով մյուս մարդկանց հետ և միայն ծառայության շնորհի միջոցով նա կարող է դառնալ կատարյալ մարդ՝ ըստ Քրիստոսի օրինակի (Կող. Ա 12): Եվ որովհետև մարդը կառուցում է իր անձնավորությունը ազատության հիման վրա, նա պարտավոր է հարգել և մյուս մարդկանց ազատությունը՝ Քրիստոսի պատվիրանի համաձայն. «Զամենայն զոր միանգամ կամիցիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դո՛ւք արարէք նոցա» (Մատթ. Ը 12): Ստրկությունը, ամեն ձևի տակ, սատանայի գործն է և մեղքի պատկեր, իսկ անձնական ազատությունը չի ապահովվում որիշներին ստրկացնելով կամ ճնշելով: Դրա համար սուրբ Հովհաննես առաքյալը գրում է. «Եթէ ոք ի գերութիւն վարէ, ի գերութիւն վարեացի... աստ է

համբերութիւն և հաւատ սրբոց» (Հայտ. ԺԳ 9): Հասարակական կյանքում քրիստոնեական բարոյականության յուրահատկությունն այն է, որ մարդկային հարաբերությունների մեջ հառաջացնում ու բարձրացնում է սիրո և եղբայրական ծառայության դերը: Ուրիշներին ծառայել սիրո մեջ, նշանակում է գիտենալ ինչի՞ց պետք է խուսափել և ի՞նչ պետք է անել նրանց բարօրության համար, այսինքն գործերով ապացուցել այն սերը, որ որպէս եղբայր պարտավոր են ունենալ նրանց հանդէպ: Աստուծո ծառայ լինելը, նշանակում է լինել բոլորի ծառան՝ Քրիստոսի օրինակի և պատվիրանի համաձայն (Լուկ. ԻԲ 27): Առավել ևս՝ լավություն անել մեծաներին, նշանակում է լավություն անել հենց Նրան՝ Քրիստոսին, իսկ զրկել նրանց քո եղբայրական օգնությունից, նշանակում է Քրիստոսի առաջ ներկայանալ առանց սիրո և ծառայության գործի (Մատթ. ԻԵ 37), նույնպէս և մերձավորին վշտացնելը, չհարգելով նրա գիտակցության ազատությունը, արգելելով նրան բարին գործելուց կամ խանգարելով նրա հոգեկան անդորրությունը, նշանակում է մեղանշել հենց Քրիստոսի դեմ, որը մեռավ բոլոր մարդկանց համար (Հռոմ. ԺԴ 15, Ա. Կորնթ. Ը 12):

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ.
ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՆՐԱ ՀԱՌԱԶԱՑՄԱՆ
ՀԱՄԱՐ

Քրիստոնեական բարոյականության ըսկըգրուները իրենց հիմքում ունեն հայտնրված այն ճշմարտությունը, որ բոլոր մարդիկ եղբայրներ են, որպէս Ադամից սերվածներ, որդիները Երկնավոր Հոր, որ հավասարապէս կոչված են փրկության ու կատարելության: Այս սկզբունքները արդյունքներն են՝ շնորհի և բարի արարքների միջոցով փրկության դավանանքի: Սկզբունքների կիրառումը քրիստոնյաների կյանքում չի վերաբերում, ուրեմն, միայն նրանց և Աստուծո միջև հարաբերություններին, այլ նաև յուրաքանչյուրի հարաբերություններին մյուս մարդկանց հետ եկեղեցական համայնքում՝ հասարակական և քաղաքացիական կյանքում: Ադամի բնությունն ու Աստուծո պատկերը գտնվում են ամեն մարդու մեջ, որովհետև Աստված «Արար ի միոջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան... և Նորա ազգ իսկ ենք» (Գործ. ԺԵ 26):

Այս է զխավոր պատճառը, որով բոլոր մարդիկ ազատության ծարավն են զգում և ջանք են թափում դրան հասնելու և պաշտպանելու այն, և քրիստոնյան պետք է պարտավոր զգա հարգել կյանքի բոլոր ասպա-

²² Leon Roy, «Liberation—liberté, in „Vocabulaire biblique“, Paris, 1970, col. 664.

րեզներում ո՛չ միայն իր, այլև իր նմանների ազատությունը: Անհատական ազատությունը, ուրեմն, անսահման և անպայմանավոր չէ. ամեն մարդ պետք է նկատի առնի մյուս մարդկանց ազատ լինելու իրավունքը, հարգի քարոշական սկզբունքներն ու քաղաքացիական օրենքները: Ինչպես ի Քրիստոս ունեցած ազատության գիտակցությունը պատճառ չի կարող հանդիսանալ անկարգ քարոշական կյանքի համար (Գաղ. Ե 13), նույնպես չի կարելի օգտագործել ազատությունը ուրիշների իրավունքները արհամարհելու (Ա Կորնթ. Ը 9) կամ հասարակական կարգ-կանոնը ոտնակոխելու համար (Մատթ. ԺԲ 21): Աստված չի ցանկանում պատակտում կամ անհիշխանություն ո՛չ եկեղեցու աստվածային մարմնի մեջ (Ա Կորնթ. ԺԲ 25, Հոռմ. ԺԲ 3), ո՛չ էլ հասարակական և քաղաքացիական կյանքում (Տիմ. Գ 1, Եբր. ԺԳ 17): Իսկ այն, ինչ որ յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է, արդար և օգտակար, նույնպես անհրաժեշտ և արդար իրավունք է ամեն մի ժողովրդի համար թե՛ նրա ներքին կյանքի կառուցվածքի մեջ և թե՛ միջազգային կյանքում: Ըստ Նոր Կտակարանի, ճշմարիտ ազատությունը չի կախում չարք գործելու մեջ, որովհետև չարք չի համապատասխանում մարդու բնությանը, ո՛չ նրա արժանապատվությանը և ո՛չ էլ նրա կոչմանը: Ծնարիտ ազատությունը կախում է, դրսևորվում ու ծաղկում բարին ինքնահոգևոր և անդադար կերպով կատարելու մեջ միայն, առաքելական խոսքի համաձայն. «Որ ոք գիտիցէ զբարին և ոչ առնիցէ, մեղք են նմա» (Հակոբ. Դ 17), ըստ Քրիստոսի վարդապետության, որը պատմելով բարի սամարացու խոր իմաստ ունեցող արարքը՝ հրամայեց օրենքի մարդուն. «Ե՛րբ և դու արա՛ նույնպես» (Լուկ. Ժ 37):

Հաստատելով քարոշական այս բարձր սկզբունքները՝ Ավետարանն իրապես բոլոր մարդկանց և բոլոր ժողովուրդների հաշվարկված ազատության, հավասարության և եղբայրության հրովարտակն է: Նա չի դատապարտում ուղղակիորեն ստրկությունը, որը հին աշխարհի կարևորագույն ընկերային կառուցվածքն էր, և չի պահանջում նրա անմիջական տապալումը, այլ ժխտում է և քանդում քարոշական այն հիմունքները, որոնց վրա հիմնված էր այն: Այս նպատակով քրիստոնեությունը ցանում է հոգիներ

ում մարդասիրական գաղափարներ, որոնց արդյունքը պիտի լինի ստրուկներին պարտադրված կյանքի և աշխատանքի պայմանների աստիճանաբար բարելավումը, նրանցից շատերի ազատագրումն ու, ի վերջո, ստրկության իսպառ վերացումը որպես հասարակարգ: Այս ճշմարտությունը դրսևավորվում է Ավետարանի բազում հատվածների մեջ. օրինակ՝ Եփես. Զ 9, Կողոս. Դ 1 և մանավանդ ս. Պողոս առաքյալի «Առ Փիլիմոն» թղթում, որ սուրբ Պողոսը Փիլիմոնին հանձնարարում է ընդունել ստրկությունից փախած Ոհիսիմոսին «իբրև զեղբայր սիրելի» և արտահայտում է իր վստահությունը, որ Փիլիմոնը դրանից ավելին էլ կանի: Եվ իրապես Փիլիմոնը, ինքնակամ կերպով փոխելով Ոհիսիմոսի իրավական և հասարակական վիճակը, ազատում է նրան ստրկությունից²³:

Այսպես է քաջատրվում այն իրողությունը, որ պատմության ընթացքում սուրբ հալքերը իրենց հովվական և միսիոնարական ամբողջ գործունեությամբ ուժեղ պայքար մղեցին ստրկության ու իրենց ժամանակի հասարակական անարդարությունների վերացման համար՝ մարդկանց հարաբերությունների մեջ քաղմացնելու համար եղբայրական սիրո մղումով կատարված գործերը: Սրանք են, միաժամանակ, Նոր Կտակարանի կարևոր հիմունքները, որով եկեղեցին, հանուն Ավետարանի և իր ոգեկանության դիրքերի, ինքն իրեն կոչված է համարում պաշտպանելու հասարակական այն բարի նորոգումները, որոնք հիմնված են մարդու նկատմամբ հարգանքի զգացումի վրա, և որոնց առարկայացած արտահայտությունը հանդիսանում է մարդկանց՝ ժողովուրդների միջև խաղաղության, եղբայրության, սիրո և համագործակցության կայուն հարաբերությունների հաստատումը:

Ռումիներենից թարգմանեց՝
ՍՈՐԻՆ ՍՐԿ. ՄԱՆԴԱԼՅԱՆ

²³ Bedebielle, «Épître au Philémon», in «La Sainte Bible Commentée», trad. si com Ed. de L. Pirot, vol. 12, Paris, 1938, p. 261;

J. Bonsirven, «Théologie de Nouveau Testament», Paris, 1951, p. 372;

F. Pratt, «La Théologie de S. Paul», vol. 1 Paris, 1927, p. 332.

